

**Երրորդ երկրներից բերվող եւ Խորհրդի 2000/29/ԵՀ հրահանգում թվարկված բույսերին,  
բուսական ապրանքներին կամ այլ պարագաների կցված պաշտոնական բուսասանիտարական  
հավաստագրերի կամ վերաարտահանման համար նախատեսված հավաստագրերի նմուշներ  
սահմանող՝ Հանձնաժողովի 2004/105/ԵՀ հրահանգ**

*Պաշտոնական տեղեկագիր L 319, 20/10/2004թ. էջ 0009–0014*

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ**

հաշվի առնելով Եվրոպական Համայնքի հիմնադրման մասին համաձայնագիրը,

հաշվի առնելով Հանձնաժողովի 92/10/ԵՏՀ հրահանգով (2) վերջին անգամ փոփոխված բույսերի կամ բուսական ապրանքների համար վնասակար օրգանիզմներ Համայնք ներկրելու եւ Համայնքում դրանք տարածելու առումով պաշտպանիչ միջոցառումների մասին Խորհրդի՝ 1976 թվականի դեկտեմբերի 21-ի 77/93/ԵՏՀ հրահանգը<sup>1</sup>, եւ, մասնավորապես, դրա 13ա (4) (ա) հոդվածը,

Քանի որ

- 1) 2000/29/ԵՀ հրահանգի համաձայն՝ երրորդ երկրներից բերվող՝ այդ հրահանգում թվարկված բույսերին, բուսական ապրանքներին կամ այլ պարագաների, որպես կանոն, պետք է կցված լինի պահանջվող պաշտոնական «Բուսասանիտարական հավաստագրի» կամ «Վերաարտահանման համար նախատեսված բուսասանիտարական հավաստագրի» (հավաստագրերի) բնօրինակը:
- 2) ՄԱԿ-ի Պարենի եւ գյուղատնտեսության կազմակերպությունում (ՊԳԿ) 1956 թվականի դեկտեմբերի 6-ին կնքված Բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիայի (ԲՊՄԿ) հավելվածով սահմանվում են հավաստագրերի նմուշներ, որոնք պարունակում են ձեւակերպման եւ ձեւաչափի առումով այն ստանդարտը, որը պետք է որպես հիմք ընդունվի՝ հավաստագրերի պատրաստման եւ տրամադրման համար:
- 3) ԲՊՄԿ-ն էականորեն փոփոխվել է 1979 եւ 1997 թվականներին: Տվյալ փոփոխությունների արդյունքում հաստատվել են միջազգային փոխադրումների ընթացքում բույսերին, բուսական

<sup>1</sup>ՊՏ L 169, 10.07.2000թ., էջ 1: Հրահանգը վերջին անգամ փոփոխվել է Հանձնաժողովի 2004/70/ԵՀ հրահանգով (ՊՏ L 127, 29.04.2004թ., էջ 97):

ապրանքներին եւ այլ պարագաների կցվելու համար նախատեսված հավաստագրերի տարբեր նմուշներ:

- 4) Չնայած 1997 թվականին ԲՊՄԿ-ում կատարված փոփոխությունները դեռ ուժի մեջ չեն մտել, այնուամենայնիվ, ՊԳԿ-ի կոնֆերանսի 29-րդ նստաշրջանի 12/97 եզրակացությամբ թույլատրվեց օգտագործել փոփոխված հավաստագրերը՝ որպես այլընտրանք եւ ըստ ցանկության ԲՊՄԿ-ի այն պայմանավորվող կողմերի միջեւ, որոնք ընդունում են դրանք: Պարզվեց, որ ԲՊՄԿ-ի շատ պայմանավորվող կողմեր արդեն իսկ օգտագործում են հավաստագրեր՝ հիմնվելով 1997 թվականին փոփոխված ԲՊՄԿ-ի հավելվածում սահմանված նմուշների վրա:
- 5) Անհրաժեշտ է որոշել այն հավաստագրերի նմուշները, որոնք պետք է կցվեն բույսերին, բուսական ապրանքներին կամ այլ պարագաների՝ դրանք Համայնք ներկրելու նպատակով:
- 6) Բույսերի պաշտպանության ազգային կազմակերպությունները սովորաբար հավաքում են մեծ թվով հավաստագրեր: Անհրաժեշտ է 1997 թվականին փոփոխված ԲՊՄԿ-ի հավելվածում սահմանված նմուշների հիման վրա սահմանել կանոններ՝ փոխադրման ընթացքում հավաստագրերի օգտագործման համար:
- 7) Սույն Հրահանգով նախատեսված միջոցները համապատասխանում են բույսերի առողջության հարցերով մշտական կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ՝

#### **Հոդված 1**

1. 2000/29/ԵՀ հրահանգի 13(1)(ii) հոդվածի նպատակով՝ անդամ պետություններն ընդունում են այն «Պաշտոնական բուսասանիտարական հավաստագրերը» կամ «Վերաարտահանման համար նախատեսված բուսասանիտարական հավաստագրերը», որոնք կցվում են Խորհրդի 2000/29/ԵՀ հրահանգում թվարկված եւ բույսերի պաշտպանության միջազգային կոնվենցիայի (ԲՊՄԿ) պայմանավորվող կողմ հանդիսացող երրորդ երկրներից բերվող բույսերին, բուսական ապրանքներին կամ այլ պարագաների, եւ որոնք տրամադրվում են I հավելվածում սահմանված նմուշների համաձայն:

2. Անդամ պետություններն ընդունում են միայն 1-ին պարբերությունում նշված հավաստագրերը՝ պայմանով, որ դրանք լրացվել են՝ հաշվի առնելով բուսասանիտարական հավաստագրերի ուղեցույցների մասին թիվ 12 բուսասանիտարական միջոցների ՊԳԿ միջազգային ստանդարտը:

#### **Հոդված 2**

Անդամ պետություններն ընդունում են միայն II հավելվածում սահմանված նմուշների համաձայն մինչև 2009 թվականի դեկտեմբերի 31-ը թողարկված հավաստագրերը:

#### **Հոդված 3**

1. Անդամ պետություններն ամենաուշը մինչև 2004 թվականի դեկտեմբերի 31-ը ուժի մեջ են դնում այն օրենքները, կանոնակարգերը եւ վարչական դրույթները, որոնք անհրաժեշտ են՝ սույն Հրահանգի պահանջները բավարարելու համար: Նրանք անմիջապես Հանձնաժողովին են փոխանցում այդ դրույթների տեքստն ու այդ դրույթների եւ սույն Հրահանգի հարաբերակցության աղյուսակը:

Երբ անդամ պետություններն ընդունում են այդ դրույթները, դրանք պետք է սույն Հրահանգին հղում պարունակեն, իսկ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում վերջիններիս նման հղում: Է կցվում: Անդամ պետությունները որոշում են, թե նման հղումը ինչպես պետք է կատարվի:

2. Անդամ պետությունները Հանձնաժողովին հաղորդում են ներպետական իրավունքի այն հիմնական դրույթների տեքստը, որոնք նրանք ընդունում են սույն Հրահանգի ոլորտի շրջանակներում:

#### **Հոդված 4**

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:

#### **Հոդված 5**

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Բրյուսելում, 2004 թվականի հոկտեմբերի 15-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Դեյվիդ Բայրն

Հանձնաժողովի անդամ

**ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՆՄՈՒՇԸ**

Թիվը .....

Բույսերի պաշտպանության կազմակերպություն՝ .....

Բույսերի պաշտպանության կազմակերպությանը (կազմակերպություններին) .....

**I. Բեռնառաքման նկարագրությունը**

Արտահանողի անվանումն ու հասցեն՝ .....

Բեռն ստացողի մատնանշած անվանումն ու հասցեն՝ .....

Փաթեթների թիվը եւ նկարագրությունը՝ .....

Տարբերակող նշանները՝ .....

Ծագման վայրը՝ .....

Սահմանված փոխադրամիջոցները՝ .....

Սահմանված մուտքի կետը.....

Արտադրանքի անվանումը եւ սահմանված քանակը.....

Բույսերի բուսաբանական անվանումը .....

Սույն հավաստագիրը տրվում է հաստատելու, որ բույսերը, բուսական ապրանքները կամ սույն փաստաթղթում նկարագրված այլ կարգավորվող պարագաներ ստուգվել եւ (կամ) փորձարկվել են համապատասխան պաշտոնական ընթացակարգերի համաձայն եւ զերծ են ներմուծող պայմանավորվող կողմի կողմից նշված կարանտին վնասակար օրգանիզմներից, ինչպես նաեւ համապատասխանում են ներմուծող պայմանավորվող կողմի բուսասանիտարական գործող պահանջներին,

այդ թվում՝ կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների առումով գործող պահանջներին:

Դրանք գրեթե զերծ են այլ վնասակար օրգանիզմներից (\*):

II. Լրացուցիչ հայտարարագիր

III. Վարակագերծում եւ (կամ) մաքրում՝ վարակագերծման միջոցով

Ամսաթիվը՝ ..... Բուժումը՝ .....Քիմիական (ակտիվ բաղադրամաս)՝  
.....

Տեսողությունը եւ ջերմաստիճանը՝.....

Կոնցենտրացիա՝.....

Հավելյալ տեղեկություններ՝.....

Տրամադրման վայրը .....

Լիազորված պաշտոնատար անձի անունը՝ ...

(կազմակերպության կնիքը) Ամսաթիվը՝ ..... ..

(Ստորագրություն)

Սույն հավաստագրի առումով ֆինանսական պարտավորության չի ենթարկվում..... (Բույսերի պաշտպանության կազմակերպության անվանումը) կամ դրա պաշտոնյաներից կամ ներկայացուցիչներից որեւիցե մեկը (\*)

(\*) Կամընտիր դրույթ:

ՎԵՐԱԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՆՄՈՒՇ

Թիվ .....

Բույսերի պաշտպանության կազմակերպություն՝ ..... (վերաարտահանման պայմանավորվող կողմ)

Բույսերի պաշտպանության կազմակերպությանը (կազմակերպություններին) ուղղված ..... (ներմուծման պայմանավորվող կողմ (կողմեր))

I. Բեռնառաքման նկարագրությունը

Արտահանողի անվանումն ու հասցեն՝ .....

Բեռն ստացողի մատնանշած անվանումն ու հասցեն՝ .....

Փաթեթների թիվը եւ նկարագրությունը՝ .....

Տարբերակող նշանները՝ .....

Ծագման վայրը՝ .....

Սահմանված փոխադրամիջոցները՝ .....

Սահմանված մուտքի կետը՝ .....

Արտադրանքի անվանումը եւ սահմանված քանակը՝ .....

Բույսերի բուսաբանական անվանումը՝ .....

Սահմանված ստացման վայրը՝ .....

Տրամադրման վայրը .....

Լիազորված պաշտոնատար անձի անունը՝ ..

(կազմակերպության կնիքը) Ամսաթիվը՝ .....

Սույն հավաստագրի առումով ֆինանսական պարտավորության չի ենթարկվում..... (Բույսերի պաշտպանության կազմակերպության անվանումը) կամ դրա պաշտոնյաներից կամ ներկայացուցիչներից որեւիցե մեկը (\*\*):

(\*) Նշում կատարել համապատասխան  վանդակներում

(\*\*) Կամընտիր դրույթ:



**ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՆՄՈՒՇԸ**

Թիվը ....

Բույսերի պաշտպանության կազմակերպություն՝ .....

Բույսերի պաշտպանության կազմակերպությանը (կազմակերպություններին)՝ ...

Բեռնառաքման նկարագրությունը

Արտահանողի անվանումն ու հասցեն՝ .....

Բեռն ստացողի հայտարարված անվանումն ու հասցեն՝ .....

Փաթեթների թիվը եւ նկարագրությունը՝ .....

Տարբերակող նշանները՝ .....

Ծագման վայրը՝ .....

Սահմանված փոխադրամիջոցները՝ .....

Սահմանված մուտքի կետ .....

Արտադրանքի անվանումն ու սահմանված քանակը .....

Բույսերի բուսաբանական անվանումը .....

Սույն հավաստագիրը տրվում է հաստատելու, որ վերոնշյալ բույսերը կամ բուսական ապրանքները ստուգվել են համապատասխան պաշտոնական ընթացակարգերի համաձայն եւ զերծ են կարանտին վնասակար օրգանիզմներից, ինչպես նաեւ այլ վնասատու օրգանիզմներից, եւ դրանք համապատասխանում են ներմուծող երկրում գործող բուսասանիտարական նորմերին:

Վարակազերծում եւ (կամ) մաքրում՝ վարակազերծման միջոցով

Ամսաթիվը՝ ..... Բուժումը՝ ..... Քիմիական (ակտիվ բաղադրամաս)՝

Տեսողությունը եւ ջերմաստիճանը՝ ..... Կոնցենտրացիա՝ .....

Հավելյալ տեղեկություններ՝ .....

Հավելյալ հաստատագիր.....

Տրամադրման վայրը .....

Լիազորված պաշտոնատար անձի անունը՝ ..

(կազմակերպության կնիքը) Ամսաթիվ՝ ..... .....

(Ստորագրություն)

---

Սույն հավաստագրի առումով ֆինանսական պարտավորության չի ենթարկվում..... (Բույսերի պաշտպանության կազմակերպության անվանումը) կամ դրա պաշտոնյաներից կամ ներկայացուցիչներից որեւիցե մեկը (\*)

(\*) Կամընտիր դրույթ:

**ՎԵՐԱՐՏԱՀԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ՆՄՈՒՇ**

Թիվը ....

Բույսերի պաշտպանության կազմակերպություն՝ ..... (վերարտահանման երկիր)

Բույսերի պաշտպանության կազմակերպությանը (կազմակերպություններին) (ներմուծման երկիր (երկրներ))

Բեռնառաքման նկարագրությունը

Արտահանողի անվանումն ու հասցեն՝ .....

Բեռն ստացողի հայտարարված անվանումն ու հասցեն՝ .....

Փաթեթների թիվը եւ նկարագրությունը՝ .....

Տարբերակող նշանները՝ .....

Ծագման վայրը՝ .....

Սահմանված փոխադրամիջոցները՝ .....

Սահմանված մուտքի կետ .....

Արտադրանքի անվանումը եւ սահմանված քանակը .....

Բույսերի բուսաբանական անվանումը .....

Բույսերի բուսաբանական անվանումը՝

Սույն հավաստագիրը տրվում է հաստատելու, որ վերոնշյալ բույսերը, բուսական ապրանքները կամ այլ կարգավորվող պարագաներ..... ներմուծվել են ..... (ծագման երկիր) .....ից (ծագման պայմանավորվող կողմ), որոնք ընդունում են բուսասանիտարական հավաստագիր թիվ .....(\*), որի բնօրինակը

վավերացված իսկական պատճենը  կցված է այս հավաստագրին. որ դրանք փաթեթավորված են  կրկնակի փաթեթավորված են  նախնական  (\*) նոր  կոնտեյներներում. որ սկզբնական բուսասանիտարական հավաստագրի  եւ հավելյալ ստուգման  համաձայն, դրանք համապատասխանում են ներմուծող երկրում գործող նորմերին, եւ .....ում (ներմուծող երկիր) պահեստավորման ընթացքում բեռնառաքումը չի ենթարկվել վնասատուներով վարակման կամ վարակման վտանգի:

Վարակազերծում եւ (կամ) մաքրում՝ վարակազերծման միջոցով

Ամսաթիվը՝ ..... Բուժումը՝ ..... Քիմիական (ակտիվ բաղադրամաս)՝

Տեսողությունը եւ ջերմաստիճանը՝ ..... Կոնցենտրացիա՝ .....

Հավելյալ տեղեկություններ՝ .....

Լրացուցիչ հայտարարագիր՝ .....

Տրամադրման վայրը .....

Լիազորված պաշտոնատար անձի անունը՝ ..

(կազմակերպության կնիքը) Ամսաթիվը՝ ..... .....

(Ստորագրությունը)՝

---

Սույն հավաստագրի առումով ֆինանսական պարտավորության չի ենթարկվում..... (Բույսերի պաշտպանության կազմակերպության անվանումը) կամ դրա պաշտոնյաներից կամ ներկայացուցիչներից որեւիցե մեկը (\*\*):

(\*) Նշում կատարել համապատասխան  վանդակներում:

(\*\*) Կամընտիր դրույթ: